ՏԱԹԵՎ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Նահապետական բարքերը Թումանյանի «Անուշ» պոեմում

Հետազոտող ուսուցիչ՝ Լիանա Մկրտչյան

Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի N1 հիմնական դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……. 3

Նահապետական կյանքը Թումանյանի «Անուշը» պոեմում……4

Եզրակացություն……14

Գրականության ցանկ…… 15

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թումանյանի «Անուշ» պոեմը լայն ժողովրդականություն վայելող ստեղծագործություն է, որի պատճառով էլ բովանդակությունը շատերին է հայտնի։ Պոեմում հանդես եկող կերպարների էությունը և հոգեբանությունը բխում է բովանդակությունից,որի հիմքում ընկած է հին նահապետական աշխարհում ապրող մի սիրահար զույգի՝ Անուշի և Սարոյի ողբերգական սիրո պատմությունը։

Իմ ուսումնասիրության **նպատակն** է քննել Լոռվա աշխարհում տիրող ավանդական մտածողության ու օրենքների, նահապետական բարքերի անդառնալի հետևանքը մարդկանց հոգեբանության ու վարքի վրա։ Այդ չքնաղ երկրի կյանքը լեցուն է անդառնալի բախումներով, երբ մարդկանց երազանքները խորտակվում են՝ բախվելով «հնոց ադաթին»։

Համաձայն այս աշխարհի դառն ու դաժան օրենքի՝ սիրահար զույգին չէր թույլատրվում մինչև ամուսնանալը հանդիպել իրար։ Բայց նրանց սրտում արթնացած սերն այնքան զորեղ էր, որ ամեն անգամ առիթ էին փնտրում ուրիշների աչքից թաքուն հանդիպելու, միմյանց պատմելու իրենց սիրուց բխող խոր ապրումների ու զգացմունքների մասին,կրկին համոզվելով, որ իրենց սերն ամուր է ու փոխադարձ։

Անուշն ու Սարոն նահապետական աշխարհից բխող ծանր հոգեբանական ապրումների ու լարված իրավիճակների զոհերն են։

ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱՆՈՒՇ» ՊՈԵՄՈՒՄ

«ԱՆՈՒՇ»-ի առաջին տարբերակը գրվել է 1890 թվականին և լույս է տեսել 1892 թվականին, բայց հետո շատ երկար ժամանակ Թումանյանը կրկին մտովի անդրադառնում էր «Անուշ»-ին՝ ձգտելով գեղարվեստական կատարելության հասցնել այն։

1903 թվականին հրատարակվեց պոեմի երկրորդ տարբերակը, որը ոչ թե առաջինի մշակումն էր, այլ արվեստի գլուխգործոց, կատարյալ երկ, որտեղ արտացոլված է հայ հին կյանքը՝ իր գունեղ, հետաքրքիր, տոնական ու առօրյա վարքուբարքով, ադաթներով ու քարացած օրենքներով (մարդու սիրտն ու հոգին, միտքն ու բանականությունը կաղապարող), հայ ժողովրդի հոգևոր գեղեցկությամբ, ուրախ երգով ու խաղով։

Պոեմի նյութը վերցված է հայ հին,նահապետական կենցաղով ապրող գյուղի կյանքից։ Պատկերված է գյուղացիների ապրելակերպը, կենցաղը, սովորույթները, հավատալիքները, մտածումները, ապրումները, ձգտումներն ու երազանքները, նահապետական կյանքի հետամնացությունը, խավարամոլությունը։

Այս ամենով հանդերձ՝ պոեմը իրականում մեծ սիրո ողբերգություն է, ցավալի, սրտահույզ ու հուսահատ սիրո պատմություն։

Հովիվ Սարոն սիրում է Անուշին, Անուշն էլ՝ Սարոյին։ Նրանց սերը մաքուր է, պարզ, հայրենի բնության նման պայծառ ու շքեղ, գեղջկական մաքուր հոգուն հարիր։ Բայց կենցաղային մի դիպված ողբերգության պատճառ է դառնում։

Պոեմը սկսվում է գեղեցիկ ու երգեցիկ նախերգանքով, որից էլ արդեն իսկ կանխազգացվում է սիրո ողբերգական վախճանը։

Եկեք քույրեր, սեգ սարերի
Չըքնաղագեղ ոգիներ,
Եկե՛ք ջահել սիրահարի
Սերը ողբանք վաղամեռ։
-Եկե՛ք, քույրե՛ր, սեգ սարերի
Չըքնաղագեղ ոգիներ,
Եկե՛ք, ջահել սիրահարի

Սերը ողբանք վաղամեռ։
Ափսո՜ս, Անու՜շ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ քու յարին.
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչքերին…

Անուշի սերը խոր ու անսահման է, և նա, դուրս գալով նախապաշարված միջավայրի դեմ, փախչում է Սարոյի հետ։

Գեղջկական պարկեշտությունը թույլ չի տալիս նրան լիովին տրվել զգացմունքներին, ինչը թախիծով է լցնում ջահել աղջկա հոգին, և նա ավելի է համոզվում, որ ինքը դժբախտ է լինելու, քանի որ «մանուկ օրերից են դեռ իրեն անիծել»։

Սիրո վեհ, վսեմ, նվիրական, սուրբ զգացումով լցված՝ Սարոն էլ է վեր բարձրանում նահապետական հետամնաց միջավայրից ու դառնում հավերժացող սիրո հերոս։ Նա տառապում է Անուշի կարոտից։ Նրա ողբերգությունը խորանում է հատկապես ճակատագրական «կոխից» հետո։ Դուշման դարձած ընկերոջից հալածված՝ նա թափառում է իր սիրած հանդերում, որոնք նրա համար դժոխք են դարձել։ Նա զգում է, որ անդարձ կորել է իր և Անուշի երջանկությունը. օրհասական պահին, երբ նա պատրաստ էր մահ ընդունել, չի մոռանում իր սիրելիի մասին, սարսափում է, վախենում, որ իրենից հետո նա կմնա աչքը լալով, կդառնա վշտահար ու սգավոր։

Կորչեմ բեզար դատարգուն,
Քարե-սարեսար դատարգուն,
Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար –քուն։

Ա՜խ, կըմեռնեմ՝ ամա նա
Վա՜յ թե հանկարծ իմանա,
Ես ազատվեմ էս ցավից,
Աչքը լալով նա մընա։

Ամեն ինչ սկսվում է ձմռան մի գիշեր՝ հարսանիքի ժամանկ, երբ Սարոն ու Մոսին ընկերավարի կոխ են բռնում, իբր մեկը մյուսին հաղթել չեն կարողանում, Սարոն հանկարծ նկատում է քողի հետևից գաղտնի իրեն նայող Անուշի աչքերը, կորցնում է իրեն, մոռանում ամեն բան ու գետնին է նետում Մոսիին։

Անուշը կանգնա՛ծ… Սարոն նըկատեց,
Թունդ առավ սիրտը ու զարկեց արագ,
Աչքերի առջև մըլարը պատեց,
Մոռացավ ընկեր, ադաթ ու աշխարք։
Ու մինչդեռ Մոսին ընկերախաղի,
Կատակի տալով թողած էր իրեն ,
Ուժ արավ Սարոն,ծընկեց կատաղի,
Գետնեց ընկերին ու չոքեց վըրեն։

Բայց սիրուց բացի կար ավելի հզոր մի բան, ավելի զորեղ մի ուժ, որը շրջանցել չէր լինի։ Ադաթն էր գյուղական՝ պատատուկի պես փաթաթված ու խեղդող։

Ադաթ կա սակայն, էն մութ ձորերում,
Ու միշտ հընազանդ հընուց ադաթին,
Ամբոխի առջև իգիթն իր օրում
Գետին չի զարկիլ ընկեր իգիթին։

Ընկերն ընկերոջը հասարակության առաջ գետին չի գցում, այլ պահում է նրա պատիվը։ Եվ ադաթի հզոր ճնշման տակ այս միջադեպը ծանր հարված էր տղամարդու արժանապատվությանը։

Մոսիի վրա սկսում է քրքջալ ամբողջ գյուղը, հեգնել ու ծաղրել, թե մին էլ փորձեք։

Ու ամեն կողմից ուրախ հըռհըռում,
Թունալի ծաղրով կանչում են, գոռում.
-Չե՛լավ, էդ չե՛լավ,
Վեր չի գըցել դեռ,
Մոսին թող էլավ-
Խոզապարկուկ էր …

Հա՛, հա՛, հա՛, տըղերք,
Շատ էլ լավ կանի.
Մեջքը թա՛փ տըվեք,
Թող մին էլ բըռնի…
Հա՛, հա՛, հա՛,տըղերք,
Մեջքը թա՛փ տըվեք…։

Մոսին լցվում է վրեժի արյունով՝ մոռանալով և՛ ընկերությունը, և՛ սիրելի քրոջը, ու հետապնդում է Սարոյին։ Մոսին, ինչպես իր միջավայրի բոլոր մարդիկ, նահապետական սովորությունների գերին է, նրան ոճրագործության է մղում միջավայրի ծաղրը։ Սարոյի սպանությունը հանգիստ չի բերում նրա հոգուն, այլ մատնում է նրան հավիտենական տառապանքի։

Սարոն Անուշի հետ միասին փախչում է սարերը, դաժան հալածանքից վշտահար սիրահարները ծանր վշտով ընկնում են ձորեր ու անտառներ, շրջում ինչպես մոլորված գառներ։ Նահապետական աղետավոր երևույթների զոհ են դառնում և՛ Անուշը, և՛ Սարոն, և՛, ինչու չէ, նաև Մոսին։

Սակայն «հնոց ադաթը» մահից հետո էլ չի ներում իր դեմ դուրս եկած Սարոյին։ Իգիթի մարմինն ամփոփում են հայրենի գետի եզերքին, հեռու իր պապերի շիրիմներից։

Նահապետական քարացած օրենքների առջև ծնկի են գալիս մարդու բախտը, երջանկությունը, հոգեվիճակը, անձնազոհությունը, սերը, հավատարմությունը …
Աղավաղվում է մարդու անհատականությունը։

Հավերժական սիրո պատմությունը իր կաշկանդող դրսևորումներով երևում է Համբարձման առավոտի նկարագրությամբ, ճակատագրին հավատալու փուչ սնահավատությամբ, երբ աղջիկները երգում են համբարձման երգերը, հավաքվում սափորի շուրջը և սրտի թրթիռով սպասում, թե վիճակահանությունը ում ինչ բախտ է գուշակելու։

Տոնական առավոտն արդեն իսկ հուշում է Անուշին իր սև բախտի, իր անիծված լինելու մասին, ու թեպետ ընկերուհիները մխիթարում էին Անուշին, բայց իրենք էլ ներքուստ հավատում էին դրան։

-Ա՛յ թուխ մազավոր աղջիկ,
Ա՛յ սարի սովոր աղջիկ,
Ջիգյարին գյուլլա դիպչի
Քեզ սիրի ով որ, աղջիկ։
-Ո՛հ , ի՛նչ սև վիճակ քեզ բաժին ընկավ,
Սևաբա՛խտ քուրիկ , նազելի Անուշ.
Քու ձեռը կոտրի, ով որ հանեցիր…
Ու ողջ մընացին մոլորված, ապուշ։

Համաձայն նահապետական աշխարհի ավանդական մտածողության ու քարացած օրենքների՝ սիրահար զույգին չէր թույլատրվում մինչև ամուսնանալը հանդիպել իրար։

Բայց սա չէր խանգարում, որ մեր սիրահարները ուրիշի աչքից հեռու գաղտնի հանդիպեին, իրար հավերժ սեր խոստանային։ Չէ՞ որ մաքուր ու անապական սերը, սիրող սրտերը, պարզ ու անկեղծ հարաբերությունները միայն գովասանքի են արժանի, ինչու՞ վախենալ, որ հետո զոհե՞ն իրենց սերն ու իրենց կյանքը։

Ամա՛ն, էրեցիր սիրտըս քու սիրով,
Ոտըս կապեցիր թել-թել մազերով,
Էլ չեմ դիմանալ, կըփախցնեմ զոռով,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ,
Թուխամազ Անուշ։
Քու հերն ու մերը թե որ ինձ չըտան,
Արին կըթափեմ ես գետի նըման.
Սարերը կընկնեմ, կորչեմ անգյուման.
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերդ կամար
Աղջիկ,քեզ համար։

Հենց այդ ադաթն էր, այդ մութ ու մթին ձորերի ադաթը, որ «իգիթը իգիթին» իրավունք չունի գետնելու ամբոխի առաջ, և Մոսին, ինչպես վիրավոր գազան, մռնչում է՝ վրեժով լցված։

Եվ աղմկալի հարսանքի տանից
Դուրս եկավ Մոսին սաստիկ վիրավոր.
Արյուն է կաթում սևակնած սրրտից,
Գընում է ըշտապ ,քայլերը մոլոր։
-Ամո՜թ քեզ,Մոսի՛, թու՛ք ու նախատինք,
Ամո՜թ քեզ նըման գոված իգիթին,
Մի անունդ հիշիր, մի բոյիդ մըտիկ,

Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին։
Ի՜նչպես վեր ընկար դու՜ սարի նըման,
Երբոր նայում էր ողջ գյուղը կանգնած…

Այս ողբերգական սիրո մեղավորը ոչ այնքան կոնկրետ մարդիկ են, որքան միջավայրի բարքերը, նահապետական ադաթներն ու քարացած օրենքները, որոնք երբևէ չի կարելի շրջանցել։ Ժամանակն առաջ է գնում, կյանքն արագ է ընթանում, բայց Անուշի ու Սարոյի միջավայրի մարդիկ մնում են անփոփոխ, մնում են նույն տեղում՝ կյանքից հետ մնացած աշխարհում։ Եվ այդ աշխարհում Անուշն ու Սարոն դառնում են հավերժական սիրո մեծ գաղափարի կրողները։ Նրանք «աստվածային անհաս խորհրդով» մահվանից հետո շարունակում են ապրել.

Էն վեհ վայրկենին չրքնաղ գիշերի՝
Երկրնքի անհու՜ն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թըռած իրար են գալիս ,
Գալիս՝ կարոտով մի հեզ համբուրվում
Աշխարհքից հեռու՜, լազուր կամարում։

Նահապետական աշխարհը այլ կերպ էր անդրադառնում Մոսիի վրա։ Եթե Անուշն ու Սարոն ադաթից, նահապետական աշխարհից փրկություն գտան

փախուստի միջոցով, ապա այդ նույն նահապետական աշխարհը ամուր նստել էր Մոսիի եսի մեջ, անձնավորվել ու պահանջում էր վրեժի իրականացում։ Վրեժի պատվիրատուները մութ աշխարհի մարդիկ էին, բովանդակ գեղը՝ նահապետական աշխարհը.

Դու՛…կուչ գաս տակին Սարոյի ծընկան,
Նըրանից հետո երևաս կանա՛նց…
Եկա՞ծ էր էս բանն իսկի քու գըլխին …

Ծաղրատեղ դառար բովանդակ գեղին …
Դե մեռի՛ր, էլի՛, գետինը մըտի՛ր,
Տանը վե՛ր ընկիր՝ իլիկ պըտըտիր…։

Մոսիի չգիտակցված մեղքի ծանրությունը այնքան իրենը չէ, որքան կյանքից հետ մնացած խեղճ ու կրակ նահապետական աշխարհինը։ Արդյունքում՝ երկու սպանություն, երկու անմեղ զոհ. Սարոն, ում սպանում է Մոսին, և Անուշը, որը դիմում է ինքնասպանության՝ միաձուլվելով իր ցավին տեղյակ Դեբեդ գետին։

Ու մարդասպանը դուրս եկավ ձորից,
Դեմքը այլայլված, քայլվածքը մոլոր.
Սարսափ է կաթում արնոտ աչքերից,
Եվ կերպարանքը փոխված է բոլոր։

Բայց մարդասպանը արդյո՞ք այլայլվում է, սարսափում իր արարքից. սպանելով ընկերոջը՝, սպանության դատապարտելով քրոջը՝ նա սպանում է ինքն իրեն ։

Նահապետական դառն իրականության դիպուկ դրսևորում է նաև Անուշի ետ գալու հանգամանքը, ինչը այսօր, ցավոք, սովորական ու արդիական է բազմաթիվ ընտանիքներում։

Լալիս է Անուշն երեսին ընկած,
Կանգնած են շուրջը կանայք հարևան,
Ու խոսք չեն գըտնում ասեն անարգված,
Տարած,ետ բերած, անբասիր աղջըկան։
Աստված խընայեց՝ կոպիտ ախպերը

Հեռու հանդերից դեռ տուն չէր դարձել,

Իսկ խոժոռադեմ ալևոր հերը

Ըսկսավ փըրփըրած թըքել, անիծել։

-Դու՛րս գընա, կորի՛, ա՛յ լիրբ, անըզգա՛մ,

Սև ու սուգ լինի թագ ու պըսակըդ.

Կորի՛, չերևաս աչքիս մյուս անգամ ,

Գետինը մըտնի երկար հասակըդ։

Տեսա՛ր,որ նըրան ատում է Մոսին,

Չեն ուզում, տեսար, նըրան հերն ու մերդ։

Դու քանի՞ գըլուխ ունիս քո ուսին,

Որ վեր ես կենում փախչում նըրա հետ։

Նահապետական աշխարհի մտածելակերպից առանձնանում ու տարբերվում է տերտերը, որը պատրաստ էր օգնել սիրահարներին.

-Դու՛րս գընացեք,դու՛րս,գոչեց տերտերը,

Անուշը թողեք ուղիղն ինձ ասի ,

Թողեք նա հայտնի իր միտքն ու սերը,

Նըրանից հետո բանը կըպարզի։

Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոստովանի՛ր,

Սիրու՞մ ես նըրան, քու կամքո՞վ փախար …

Եթե սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,

Պիտի պըսակեմ ես ձեզ անպատճառ…

Բայց արդեն ուշ էր, շատ ուշ.

-Ի՛նչ են հառաչում…էն ո՛վ էր, մի տե՛ս,

Որ դուրսը հանկարծ աղմըկեց էսպես…

Ո՞վ է ըսպասել…Մոսի՞ն,,,ու՛մ…ու՛ր…

-Անու՛շ, հե՛յ Անու՛շ…ջուր հասցրե՛ք, ջու՛ր…

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դաժան ու խավար աշխարհում՝ նահապետական հետամնաց իրականության մեջ, խորտակվում են անբասիր սիրով, ողջ էությամբ միմյանց սիրող սրտերը, բայց և այնպես մաքուր, անեղծ ու նվիրական սերը մնում է հավերժ ու անմահ։

Մոսին ու հայրն էլ կառչած են հին, հետամնաց, նահապետական քարացած օրենքներին, սովորույթներին, բայց չունեն չարություն, նենգություն, ապրում են հոգեկան ծանր պահեր. մեկը կորցնում է դստերը, զավակին, մյուսը՝ քրոջն ու ընկերոջը։

Հայր ու որդի նույնպես ապրում են խոր ողբերգություն, և սա ամբողջ կյանքի համար է, որը երբեք չի մոռացվի։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Թ.Գ. Ջուհարյան «Հայ գրականության մեթոդիկա» Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան 1972
2. Հ.Թումանյան, ընտիր երկեր, հատոր առաջին